

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

_____ 2017թ. թիվ _____/Ա/

ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆԻ ԱԲԳԱՐՅԱՆԻՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

«Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան
Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

Մինչև 2017 թվականի ամառային զորակոչը պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տալ
տարկետում Սամվել Վարդանի Աբգարյանին՝ (ծնվ. 25.09.1997թ., հաշվառման վայրը՝ ՀՀ Շիրակի
մարզ, ք. Գյումրի, Երևանյան խճուղի 139ա շենք, 11 բն., սովորում է՝ ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու
թիվ 8 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 12-րդ դասարանում):

ՀՀ կրթության և գիտության նախարար

Լևոն Մկրտչյան

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

Սամվել Վարդանի Աբգարյանը սովորում է ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 8 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 12-րդ դասարանում: 2016թ. սեպտեմբերի 25-ին լրացել է նրա 19 տարին: Սովորելու տարիներին ծնողի հիվանդության պատճառով երկու անգամ տեղափոխվել է Ռուսաստանի Դաշնություն և այդ պատճառով կրկնել ուսումը նույն դասարանում: Ուսումնառությունը ավարտելու է 2017թ. հունիսին:

Ելնելով վերոշարադրյալից՝ նպատակահարմար եմ գտնում Սամվել Վարդանի Աբգարյանին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տալ տարկետում մինչև 2017 թվականի ամառային զորակոչը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացությունը
1	<p>ՀՀ պաշտպանության նախարարություն 30.12.2016թ. N ՊՆ/510-2173</p>	<p><<Սամվել Վարդանի Աբգարյանին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագիծը:</p>	<p>դիտողություն չունի</p>
2.	<p>ՀՀ արդարադատության նախարարություն 06.12.2016թ. N 01/14/16166-16</p>	<p><<Սամվել Վարդանի Աբգարյանին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագիծը:</p>	<p>նախագիծը համապատասխանում է ՀՀ օրենսդրությանը</p>
3.	<p>ՀՀ նախագահի աշխատակազմ 22.12.2016թ. N 2300</p>	<p><<Սամվել Վարդանի Աբգարյանին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագիծը:</p>	<p>դիտողություն չունի</p>